



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 11 ՅՈՒՆ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,  
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:  
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.  
մի՛ ձգեր որ պատուէրներէդ խոսորդիմ:  
Խօսքդ սրտիս մէջ պահեցի,  
որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանշեմ:  
Օրհնեալ ես դուն, Տէ՛ր,  
սորվեցուր ինձի քու կանոններդ:  
Շրթունքներս անդադար պիտի կրկնեն  
բերնէդ դուրս եկած ամէն մէկ վճիռ:  
Հաճոյք կ'առնեմ պատուիրաններդ կապարելէն,  
բոլոր տեսակի հարստութիւններէն աւելի:  
Հրահանգներդ են մտածումիս առանցքը,  
ուսուցումներդ՝ ուշադրութեանս առարկան:  
Կանոններդ են ինձի հաճոյք տուողը,  
եւ խօսքերդ բնաւ պիտի չմոռնամ:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վաճառուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պ**ահապան ամենայնի Զրիստոս,  
այ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



## ԱՌԱԿԱՑ 31 ԳԼՈՒԽ

### ՊԱՏԳԱՄ ԹԱԳԱԲՈՐԻ ՄԸ 31:1-9

Ինչպես Ագուրի պարագային, հոս եւս՝ 31 գլուխը Լեւնուէլ թագաւորի խօսքերը, պատգամները, որ իր մայրը սորվեցուց իրեն: Ո՛վ է Լեւնուէլ թագաւոր: Անունը կը նշանակէ Տիրոջ կը պատկանի: Երկրորդ, այսպիսի անունով թագաւոր մը չէ եղած Իսրայէլի ժողովուրդին մէջ: Ուրեմն կ'ենթադրուի, որ հեթանոս թագաւոր մը պէտք է եղած ըլլայ, սակայն Աստուծոյ երկիւղը ունեցող: Ահա այդ երկիւղով է որ նաեւ ձեռք ձգած է իմաստութիւն, ինչպէս այս գիրքին առաջին փողերը եկան վկայելու այդ մասին. «Սկիզբ իմաստութեան, երկիւղ Տեառն» 1:7: Ուրիշներ Լեւնուէլը կը վերագրեն նոյնինքն Սողոմոն իմաստունին: Ինչ ալ ըլլան պայմանները, սակայն այս խօսքերը դարձեալ մարգարեական պատգամներ են Աստուծոյ կողմէ փրուած: Այս պարագային Լեւնուէլի մայրը սորվեցուցած է, որ կը նշանակէ, Տիմոթեոսի նման անոր մայրը հրեայ պէտք է եղած ըլլայ: Այսպէս կը շեշտուի մօր դերակատարութիւնը դաստիարակութեան մէջ, այնպէս ինչպէս որ էր պարագան Մովսէսին: Հոս եւս Լեւնուէլի մայրը անոր կը սորվեցնէ Աստուծոյ երկիւղը եւ այդ երկիւղով ձեռք ձգելու իմաստութիւն:

Մայրը որ ինքզինք կը ներկայացնէ այնպիսի ձեւով, եւ իր խօսքերը կ'ուղղէ Լեւնուէլին, որպէս իր որդին, արգանդի որդին, ու մանաւանդ ուխտի որդին: Որովհետեւ մայրը գիտակցութիւնը ունի այն կոչումին ու պարտաւորութեան հանդէպ իր զաւկի դաստիարակութեան: Երեք նշումները պարզ նշումներ չեն, այլ ժամանակ կ'ենթադրեն: Առաջինը՝ հիման, երկրորդը՝ ծնունդը, իսկ երրորդը՝ յղութենէն առաջ: Այն խոսքումը որ փրուած էր Աստուծոյ, որ եթէ զաւակ մը ունենայ պիտի Աստուծոյ փրամադրութեան փակ դնէ, Անոր երկիւղովը դաստիարակէ, ինչպէս Սամուէլի մայրը՝ Աննան:

3 հմր: Առաջին իսկ առիթով կը զգուշացնէ մայրը հեռու մնալու անբարոյութենէն, այնպէս իր ամբողջ գործութիւնը կրնայ կորսնցնել, մինչեւ իսկ թագաւորներու գործութիւնը: Ինչպէս Դաւիթի պարագան, Սողոմոնի պարագան, Սամսոնի պարագան:

4-7 հմր, յաջորդ զգուշացումը խմիչքէն: Մանաւանդ՝ անոր որ պատասխանատու է, որպէս թագաւոր, որպէս ղեկավար, որպէս առաջնորդ ժողովուրդի, որպէսզի չըլլայ թէ գինովութեան պատճառով օրէնքը մոռնայ, փառապաշտին դաբը ծռէ: Անոր փոխարէն փան այդ խմիչքը անոր որ արդէն կորսուելու վրայ է, կամ աղքատին, որպէսզի մոռնայ իր աղքատութիւնը: Մօր մտահոգութիւնը, թագաւորն է, որպէսզի կարենայ ուղղութեամբ եւ արդարութեամբ կառավարել:

8-9 հմր, հեռու մնալու խմիչքէն որպէսզի արթուն ըլլայ, եւ ահա իբրեւ արթուն վիճակ, այս անգամ կարենայ օգտակար ըլլալ անոր որ կարողութիւնը չունի խօսելու եւ ինքզինք պաշտպանելու: Թագաւորը ինք ըլլայ խօսնակը այդպիսիին, եւ ըստ այնմ արդարութեամբ դարելու աղքատին ու փրանկին դաբը:

### ԿԱՐՈՂ ԿԻՆԸ 31:10-31

Յաջորդող 22 համարները երբայական այբուբենական շարքով ներկայացուած խրատներ են, որոնք կը ներկայացնեն առաքինի կիներ: Այս ձեւը կ'օգտագործուի դիւրին միտք պահելու համար: Այնպէս ինչպէս Ներսէս Շնորհալի հայրապետը ինք եւս Առաօտ Լուսոյ շարականը այբուբենական կարգով ներկայացուցած է: Լեւնուէլի մայրը ըստ այնմ խրատ կու տայ իր զաւկին իրեն համար ըստ այնմ առաքինի կին փնտրելու, խօսքը նաեւ բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն ամուսնանալ եւ ընտանիք կազմել: Յարգանս բոլորին, բայց մենք ընդհանրապէս շեշտը կը դնենք արտաքինին, անոր գեղեցկութեան, անոր գրաստութեան, եւ ոչ թէ անոր հոգեւոր արժէքներուն, կամ անոր ունեցած առաքինի կենցաղին կամ նկարագրին: Կին մը որ ունի Աստուծոյ երկիւղը: Կին մը, որ յետոյ յանձնառու է դաստիարակելու իր զաւակները ըստ այնմ, կին մը, որ իր ընտանիքին համար բարիք պիտի բերէ եւ ոչ թէ չարիք:

10 հմր, այնպէս ինչպէս գոհարը, այն թանկագին քարը, որ ոչ միայն սուղ է, այլ նաեւ դժուար գրանելի, նոյնպէս ալ առաքինի կինը դժուար թէ գտնուի, իսկ անգամ մը որ գտնես, ան շատ աւելի արժէք է քան այդ թանկագին քարը: Այսպէս նաեւ կարելի է ասոր մէջ տեսնել նոյնինքն իմաստութիւնը ինք, որպէս թանկագին քարէ աւելի արժող Առակաց 3:15, 8:11: 11-12 հմր, առաքինի կնոջ ամուսինը ամբողջութեամբ կը վստահի անոր, որովհետեւ անիկա օրհնութիւն ու բարիք կը բերէ այդ փան, եւ ոչ թէ չարիք:

13-16 հմր, փակաւին առաքինի կինը աշխատասէր է, նման այն վաճառական նաւերուն, որոնք իրենց հետ ապրանքներ կը բերեն, նոյնիսկ եթէ պէտք է հեռու փեղերէն բերելու: Գիշերով արթննալ պէտք է, կ'արթննայ, որպէսզի փան բնակիչներուն կերակուր հայթայթէ: Ան պատրաստ է մինչեւ իսկ ամենադժուարին գործը ընելու այգի փնկելու եւ անոր պտուղէն ուտելու:

17-20 հմր, առաքինի կինը ունի նաեւ գորատր բազուկներ, այդ բազուկներով աշխատանք ընելու, իրեն փրուած վաստակին արժէքը գիտէ, եւ այդ նոյն իմաստութեամբ նաեւ իր փան ճրագին կանթեղինձէթը միշտ կ'ապահովէ, որպէսզի անոր լոյսը չմառի: Ան ոչ միայն հոգ կը փանի իր փան անդամներուն, այլ նաեւ աղքատին օգնութեան ձեռք կ'երկարէ:

21-23 հմր, առաքինի կինը, որովհետեւ իմաստութեամբ կը շարժի, անոր համար ալ ան երբեք վախ չունի ձիւնէն, որովհետեւ իր փան անդամներուն կրկնակի հանդերձ հագցուցեր է, այսինքն՝ ապահով է: Իր իսկ ձեռքով կը շինէ ծածկոցներ: Իր ամուսինը կը ճանչցուի երբ երկրի ծերերուն հետ նստի, այսինքն՝ իմաստուններուն: Ամուսինը կը ճանչցուի իրմով՝ առաքինի կնոջմով: Եւ վստահ ամուսնոյն երանի կու փան:

24-25 հմր, իր առաքինութիւնն ու աշխատանքը ոչ միայն իր փան անդամներուն համար, այլ նաեւ մինչեւ իսկ վաճառականներուն: Այնպիսի որակի աշխատանքներ կ'ընէ, որ վաճառականներ ուզեն իրմէ գնել: Ահա այս բոլորը իրեն համար կը դառնան գորութիւն եւ փառք, որուն ուրախութիւնը ոչ միայն հիման, այլ նաեւ գալիքին, վերջին օրերուն:

26-27 հմր, առաքինի կինը նաեւ գիտէ երբ եւ ինչքան պէտք է խօսի: Ան երբ բանայ իր բերանը իմաստութեամբ կը բանայ, եւ ոչ թէ րեղի անրեղի խօսակցութեամբ: Երկրորդ՝ լեզուին վրայ քաղցրութիւն կայ: Կը նշանակէ առաքինի կինը բռնաբեր չէ, ինքզինքը փէր չի նկատեր ամուսնոյն վրայ, այլ՝ ողորմութեամբ եւ քաղցրութեամբ կը վերաբերի բոլորի հետ: Ան միշտ գգուշ է իր փանը նկատմամբ, եւ ընդհանրապէս դէմ է ծուլութեան, որովհետեւ ան ծուլութեան հաց չուտեր:

28-29 հմր, առաքինի կինը, եւ այս պարագային մայրը կը գովաբանուի, կը փառաբանուի իր գաւակներուն եւ իր ամուսնոյն կողմէ: Անոնք ոչ միայն կը վայելեն անոր ներկայութիւնը, այլ կը սկսին մեծարելու զինքը, եւ իր մասին խօսելու, որպէս երանելի ոչ միայն առաքինի կինը, այլ նաեւ իրենք: Ամուսինը նոյնպէս կը գովէ այնպէս մը, որպէս գերագանց միւս բոլոր առաքինի կիներէն: Ոչ թէ անոնք առաքինի չեն, այլ ամուսինը արդէն իրեն համար գրած է այդ առաքինի կինը:

30-31 հմր, ի վերջոյ, Լեմուէլի մայրը կու փայ հետեւեալ խրատը Լեմուէլին, որ արտաքին գեղեցկութեամբ մի խաբուիր, որքան ալ առաջին իսկ առիթով փայտորութեան բաժինն է, բայց այդ արտաքինը սուր է ու խաբուսիկ, ունայնութիւն, որովհետեւ ժամանակի ընթացքին անոնք կը խամրին, կ'այլափոխուին, իսկ մնայուն գեղեցկութիւնը Տիրոջմէ վախճող կինն է, որուն կը փրուի այնպիսի գեղեցկութիւն մը, ուր ոչ ժամանակը, ոչ ալ արտաքին որեւէ մէկ ազդակ կրնայ այդ գեղեցկութիւնը այլափոխել: Այսպիսին է որ պիտի գովուի:

Առակից գիրքը սկսաւ «իմաստութեան սկիզբը, երկիւղ Տեառն» բացատրութեամբ, ահա կ'աւարտի նոյն մտքով, երկիւղ Տեառն բացատրութեամբ այս անգամ կնոջ պարագային, որ պիտի գովուի: Ահա թէ ինչու կարեւորութեամբ կը շեշտուի մօր դերն ու րեղը ոչ միայն փան մէջ, այլ ամբողջ ընկերութեան: Այնպիսի կին, որ ունի Տիրոջ երկիւղը, եւ ըստ այնմ նաեւ կը դաստիարակէ իր գաւակները, որպէսզի այդ գաւակներով կազմուի ընկերութիւնը: Եւ Լեմուէլի մօր մտահոգութիւնն է, որ Լեմուէլ այդպիսի կին մը փնտռէ ու գրնէ իրեն համար: Այսպիսի կին պիտի վարձափրուի Տիրոջ կողմէ, եւ իր մասին պիտի խօսուի ամենրեւ: Աղօթենք, որ այսպիսի առաքինի աղջիկներ շարունակեն, որպէսզի երբ փրաներ ուզեն ամուսնանալ եւ ընտանիք կազմեն այնպէս ճշտելիք գաւակները ըստ այնմ դաստիարակուին, դառնալու համար ընտիր ու առաքինի քաղաքացիները Աստուծոյ արքայութեան: Որովհետեւ վերջ ի վերջոյ, այս բոլորին նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ ազնիւ, առաքինի ու Տիրոջ երկիւղով դաստիարակուած քաղաքացիներ պատրաստել արքայութեան համար: